



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 2-11-10

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հոկտեմբերի 2012 թվականի N 39-Ն

**ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի «ԵՂՎԱՐԴԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, հիմք ընդունելով Եղվարդ համայնքի տաածքում աղբահանության աշխատանքների ծավալի աճը, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսի ավելացման անհրաժեշտությունը, համայնքի անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների համար տրամադրվող օգնությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Եղվարդի թիվ 1 մանկապարտեզ >> ՀՈԱԿ փաստացի հաճախող երեխաների քանակը և սննդամթերքի համար նախատեսված գումարը գերազանցել է նախապես պլանավորածը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Եղվարդի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Եղվարդի համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N1 հավելվածի բյուջեի եկամտային մասի.

ա, «համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ հոդվածի.<<9140.0>> թիվը փոխարինել <<11140.0>> թվով.

բ, «Տեղական վճարներ» հոդվածի <<4000.0>> թիվը փոխարինել <<6000.0>> թվով.

գ, «<օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ>> հոդվածի <<4070.7>> թիվը փոխարինել <<6070.7>> թվով,



2) Որոշման N 2,3 հավելվածների բյուջեի ծախսային մասի  
ա, 06-6.1 ծրագրի 4212 հոդվածի <<5000.0>> թիվը փոխարինել <<6800.0>> թվով  
բ, 06-6.1 ծրագրի 4264 հոդվածի <<4700.0>> թիվը փոխարինել <<6200.0>> թվով  
գ, 09-4.1 ծրագրի 4729 հոդվածի <<15000.0>> թիվը փոխարինել <<17000.0>> թվով  
դ, 09-1.1 ծրագրի 4637 հոդվածի <<39000.0>> թիվը փոխարինել <<39700.0>> թվով:

Կողմ -7

Դեմ -0      Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԻԱՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ *[Signature]*
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՈՒՇ *[Signature]*
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՌԱՖԻԿ *[Signature]*
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅՎԱՆՈՒՇ *[Signature]*
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *[Signature]*
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ *[Signature]*
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽՈՍՐՈՎ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ



*[Signature]*  
ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ